ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 2024թ. հունվարի 31-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 24-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայցորդների ատեստավորում
2. Հայցորդի թեմայի և ղեկավարի հաստատում
3. Մագիստրոսական կրթական ծրագրերի փոփոխությունների հաստատում
4. Բակալավրի կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունների քննարկում և հաստատում
5. Ընթացիկ հարցեր

1. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդների ատեստավորման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. «Կառավարման և գործարարության» ամբիոնի հայցորդների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ատեստավորման են ներկայացվում ամբիոնի հայցորդներ՝ Արշակ Աշոտի Ներսիսյանը (2-րդ տարի) և Միեր Մերուժանի Օթարյանը (2-րդ տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Արշակ Աշոտի Ներսիսյանի «Պետական գնումների համակարգի կատարելագործման ուղիները (ՀՀ օրինակով)» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյան) ատենախոսությունը ավարտուն վիճակում է, քննարկվել է ամբիոնի նիստում, պահանջվող քանակով հոդվածները տպագրված են: 26.01.2024թ-ին հայցորդը հաջողությամբ պաշտպանել է ատենախոսությունը ԵՊՀ Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդում:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Միեր Մերուժանի Օթարյանի «Տարածքային կառավարման հիմնախնդիրները և արդյունավետության

բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Սարգսյան) ատենախոսությունը գտնվում է ավարտման փուլում: Հայցորդը իրականացրել է գիտական գրականության հավաքագրում, ոլորտային ուսումնասիրություններ՝ ռազմավարությունների վերլուծություն ատենախոսության շրջանակում: Ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակել է առաջարկությունների փաթեթ՝ ուղղված տարածքային կառավարման արդյունավետության բարձրացմանը: Հանձնել է բոլոր դասընթացների քննությունները և ստուգարքները, բացառությամբ մեկ դասընթացի՝ «Հետազոտական և գրավոր գործունեություն՝ օրենքի կարգապահական շեշտադրմամբ» (Research and writing with a disciplinary focus on law):

2. Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա.Առաքելյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը հարց հնչեցրեցին. արդյո՞ք ժամանակավրեպ չէ ատենախոսությունը պաշտպանած հայցորդ Արշակ Աշոտի Ներսիսյանի ատեստավորման միջնորդությունը:

3. Հայցորդ Արշակ Աշոտի Ներսիսյանի գիտական ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ ատենախոսությունը պաշտպանած հայցորդի ատեստավորման պահանջը բխում է ԲԿԳԿ-ի սահմանած կանոնակարգի պահանջներից: Տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց հայցորդների ատեստավորումը դնել քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Կառավարման և գործարարության» ամբիոնի 24.01.24թ. կայացած թիվ 8 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի հայցորդների կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Արշակ Աշոտի Ներսիսյանի (2-րդ տարի) և Միեր Մերուժանի Օթարյանի (2-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել: Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

«Կառավարման և գործարարության» ամբիոնի հայցորդները ատեստավորվեցին՝ միաձայն քվեարկությամբ:

2. **ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի հայցորդ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանը

հայցորդ է ձևակերպվել 1.5 տարի առաջ, ատեստավորվել է, սակայն գիտխորհրդի արձանագրության մեջ ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման փաստը չի արձանագրվել: Հավելեց, որ գիտխորհրդի այս նիստում պետք է հաստատվի հայցորդի թեման և ղեկավարը:

2. «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի հայցորդ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերտառության և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է հայցորդի թեման՝ «Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման մոդելավորման հիմնախնդիրները», որի շրջանակում հայցորդը էական աշխատանք է կատարել և ատեստավորվել գիտխորհրդում, գիտական ղեկավար է հաստատվել՝ տեխ.գ.դ., պրոֆեսոր Արամ Հմայակի Առաքելյանը, ում գլխավորությամբ 1.5 տարի աշխատել է հայցորդը:

3. Հայցորդ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանը նշեց, որ ժամկետների հետ կապված խնդիր չունի, 1.5 տարվա ընթացքում զգալի աշխատանք է կատարել՝ գիտական ղեկավարի անմիջական մասնակցությամբ:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ փաստացի բացթողում է եղել, որը շտկվում է և առաջարկեց «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի 25.01.24թ. կայացած թիվ 7 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի՝ «Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման մոդելավորման հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տեխ.գ.դ., պրոֆեսոր Արամ Հմայակի Առաքելյանին: Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի սույն որոշումը:

«Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի հայցորդի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ:

3. Մագիստրոսական կրթական ծրագրերի փոփոխությունների հաստատում

3.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ուսուցմամբ «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրի փոփոխության հաստատման մասին հարցը:

3.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների» ամբիոնի մագիստրոսական 2 ծրագրերը՝ «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» և «Միջազգային տնտեսական հարաբերություններ», արդեն երկու տարի է չեն համալրվում և դրանով պայմանավորված կատարվել են փոփոխություններ: «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» ծրագրի ղեկավարը եղել է պրոֆեսոր, տ.գ.թ. Գ.Գալստյանը, նոր ծրագրի փոփոխված տարբերակի մշակման աշխատանքները համակարգել է պրոֆեսոր, տ.գ.դ. Մ.Միքայելյանը:

2. Պրոֆեսոր, տ.գ.դ. Մ.Միքայելյանը նշեց, որ ծրագրի չկայացումը չի կարող մեկնաբանել և ծրագրի ժամկետի կրճատումը՝ 2-ից 1,5 տարի (120 կրեդիտից՝ 90), կատարվել է գրավչությունը բարձրացնելու, ինչպես նաև մասնագիտական հմտություններ փոխանցելու նպատակով: Հավելեց, որ կատարված փոփոխությունները համապատասխանում են պահանջվող կարգին: Մատնանշեց, որ առկա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման ՏՔԻ կրթական ծրագրի ուսումնական պլանը հասանելի է եղել գիտխորհրդի բոլոր անդամներին և պատրաստ է պատասխանել մագիստրոսական ծրագրի փոփոխված տարբերակին առնչվող հարցերին:

3. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

Հարցադրումներն առնչվում էին ՏՔԻ կրթական ծրագրի փոփոխված ուսումնական պլանում ներառված դասընթացների ձևակերպումներին, կրթական ծրագրի ուղղվածության հստակեցմանը, մագիստրոսական այլ ծրագրերի հետ հատումների և համընկնումների խնդրին:

4. Պրոֆեսոր, տ.գ.դ. Մ.Միքայելյանը պատասխանելով հարցադրումներին նշեց, որ բարձրաձայնված մտահոգությունները անտեղի են, քանի որ ծրագրում ներառված դասընթացներում դիտարկվելու են կոնկրետ ոլորտին առնչվող հիմնախնդիրները, դա արվելու է պրակտիկ մեծ փորձ ունեցող մասնագետների կողմից: Հավելեց նաև, որ տնտեսական գործընթացների կարգավորմամբ զբաղվող օղակներում կադրերի լուրջ պակաս կա և մագիստրոսի պատրաստման ՏՔԻ կրթական ծրագրի փոփոխված տարբերակը նպատակ ունի լրացնել այդ բացը: Եզրափակիչ խոսքում նշեց, որ ՏՔԻ

կրթական ծրագրի կրճատված և փոփոխված տարբերակը կնպաստի ծրագրի կայացմանը՝ դիմորդների հոսք ապահովելով:

5. Ելույթ ունեցան դոցենտ, տ.գ.թ. Գ.Մնացականյանը, պրոֆեսոր, տեխ.գ.դ. Ա.Առաքելյանը, դոցենտ, տ.գ.թ. Կ.Եղոյանը, դոցենտ, տեխ.գ.թ. Հ.Զաքոյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, դոցենտ, տ.գ.թ. Գ.Հայրապետյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

Դոցենտ, տ.գ.թ. Գ.Մնացականյանը նշեց, որ կատարված հարցադրումների պատասխանները ակնառու կլինեն ծրագրում ներառված դասընթացների նկարագրիչների դիտարկման պարագայում միայն:

Պրոֆեսոր, տեխ.գ.դ. Ա.Առաքելյանը և դոցենտ, տ.գ.թ. Կ.Եղոյանը նշեցին, որ իրավունքի մասով ծրագիրը կաղում է, քանի որ ծրագրում իրավունքի մասով ներառված է միայն 2 դասընթաց:

Դոցենտ, տեխ.գ.թ. Հ.Զաքոյանը նշեց, որ առհասարակ մագիստրոսական ծրագրերն ունենում են խիստ նեղ ուղղվածություն, նույնիսկ մակրո և միկրո մակարդակների տարանջատումից զատ՝ ծրագրերը կազմվում են ըստ ոլորտների: Ծրագրում ներառված դասընթացների անվանումները պետք է անպայման վերաձևակերպվեն այնպես, որ օբյեկտը լինի տեսանելի:

Տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը իր հարցադրումները հիմնավորեց այն փաստարկով, որ ՏՔԻ ծրագրի փոփոխված տարբերակում ներառված դասընթացները ավելի շատ առնչվում են «Ֆինանսներ» մագիստրոսական ծրագրին: Նշեց նաև, որ լավ աշխատանք է կատարված հատկապես ժամկետի կրճատման մասով, բայց միջազգային փորձի ուսումնասիրությունը այս համատեքստում շատ կարևոր է և միայն այդ դեպքում ծրագրի փոփոխված տարբերակի գրավչությունը էապես կբարձրանա:

ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. Գ.Հայրապետյանը, նախ, շնորհակալություն հայտնեց ծավալված բովանդակային քննարկման համար, նշեց, որ մագիստրոսական այլ ծրագրերի հետ հատումների և համընկնումների դեպքում ամբիոնը պատրաստ է շտկումներ կատարել: Հավելեց, որ դասընթացների անվանումների վերաձևակերպման, իրավունքին առնչվող դասընթացների մասով ծրագրի համալրման դեպքում՝ ծրագիրն էապես կբարելավվի:

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը քննարկման արդյունքները ամփոփեց ամբիոնից՝ ընդգծելով, որ «Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների» ամբիոնը պետք է մի քանի ուժեղ մագիստրոսական ծրագրեր ունենա, այս իմաստով աշխատանքային խմբի կատարած աշխատանքը շնորհակալության է արժանի: Նշեց, որ հնչած մտահոգությունները լուրջ են, առաջարկեց ստեղծել այլ ամբիոնների հետ համատեղ աշխատանքային խումբ և

վերանայել ծրագիրը՝ հստակեցնել բոլոր դասընթացների անվանումները, ինչպես նաև հստակեցնել ծրագրի վերջնարդյունքները, ուսանողներին փոխանցվելիք կարողությունները և հմտությունները: Հավելեց նաև, որ ծավալված քննարկումից տպավորություն է, որ առարկաները ծրագրում ներառվել են «ով ինչ կարող է կարդալ» սկզբունքով: Ամփոփելով ելույթը առաջարկեց՝ քանի որ ՏՔԻ մագիստրոսական կրթական ծրագիրը ներառված չէ 2024-25 ուստարվա հայտացուցակում, անհրաժեշտ է ձևավորել մասնագիտական հանձնախումբ, աշխատել 2-3 ամիս և լավարկել ծրագիրը:

Այլ առաջարկներ չեղան:

3.1 ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով գիտխորհրդի նիստում ծավալված բովանդակային քննարկման եզրահանգումները և արտահայտված կարծիքները՝ լրամշակել և լավարկել «Տնտեսական քաղաքականություն և իրավունք» մագիստրոսական կրթական ծրագրի (1,5 տարի, 90 ECTS) փոփոխված տարբերակը, այդ նպատակով կազմել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝ տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Միքայելյան, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյան, տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյան, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյան, տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյան, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյան, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյան:

ՏՔԻ մագիստրոսական կրթական ծրագրի լրամշակման և լավարկման, այդ նպատակով աշխատանքային խումբ կազմելու որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

3.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ուսուցմամբ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագրի փոփոխության հաստատման մասին հարցը:

3.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար պրոֆեսոր, տ.գ.դ. Թ.Թորոսյանը նշեց, որ այս ծրագիրը առաջին մագիստրոսական կրթական ծրագիրն է եղել ֆակուլտետում: Անհրաժեշտությամբ պայմանավորված ծրագիրը մշտապես վերանայվել և վերափոխվել է, գործել է և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման համակարգերում: Սակայն վերջին տարիներին բավարար չափով չհամալրվելու պատճառով չի կայացել: Այս փոփոխության առաջին կարևոր բաղադրիչը ժամկետի կրճատումն է՝ 2-ից 1,5 տարի: Հավելեց նաև, որ ծրագրի փոփոխված տարբերակի համար ներկայացվել են 12 էջից բաղկացած հիմնավորումներ, ծրագրում ընդգրկված մասնագետների

ինքնակենսագրականները: «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագրի փաթեթը ամբողջությամբ պատրաստ է, «Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների» ամբիոնը պատրաստ է 2024-25 ուստարվա ընդունելությանը:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ՄՏՀ կրթական ծրագիրը 2024-25 ուստարվա մագիստրոսական ծրագրերի ցանկում ներառել են մեծ դժվարությամբ՝ անվճար տեղերի բացակայության պայմանով: Ծրագրի կայացման դեպքում հաջորդ տարիներին կքննարկվի անվճար տեղ հատկացնելու հարցը:

3. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանը, «Կառավարում» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Վ.Մաթևոսյանը, տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

Հարցադրումներն առնչվում էին ՄՏՀ կրթական ծրագրի փոփոխված ուսումնական պլանում դասընթացների ներառման առաջնահերթություններին, օտար լեզվով դասավանդելու համար նախընտրելի դասընթացների ցանկին, որոշ դասընթացների համար ընտրված հիմնական գրականության ցանկին:

4. Պրոֆեսոր, տ.գ.դ. Թ.Թորոսյանը պատասխանելով հարցադրումներին նշեց, որ պահանջվող կարգի համաձայն դասընթացներից մեկը պետք է կարդացվի օտար լեզվով, իսկ ռուսերենը այդ շարքին է դասվում: Հավելեց նաև, որ ծրագրում ներգրավված մասնագետների իմացությունը բավարար է շեշտադրված առարկան՝ «ՀՀ տնտեսության արդի հիմնախնդիրները (ռուսերեն)», նաև հայերենով կարդալու համար, իսկ օրինակ «Միջազգային առևտուրը»՝ անգլերենով: Հնչած մյուս բոլոր հարցերի պատասխանները հիմնավորեց՝ դասընթացների մասնագրերի վրա հղումներ կատարելով:

5. Ելույթ ունեցան դոցենտ, տ.գ.թ. Գ.Հայրապետյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. Գ.Հայրապետյանը նշեց, որ աշխատանքային խմբի անդամ լինելով տիրապետում է ՄՏՀ կրթական ծրագրի փոփոխված տարբերակում ներառված բոլոր դասընթացներին: Հավելեց, որ ծրագրի նորացման համար հիմք են հանդիսացել առաջատար համալսարանների ծրագիրը՝ այս համատեքստում միջազգային փորձն ուսումնասիրվել է ամբողջությամբ:

Տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը և տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը իրենց գոհունակությունը հայտնեցին, մատնանշեցին, որ ծրագրի աշխատանքային խմբում ընդգրկված գործընկերները էական աշխատանք են կատարել:

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկման արդյունքները նշեց, որ ՄՏՀ կրթական ծրագիրը միշտ եղել է արդիական և

հետաքրքիր, ծրագրի թեմաները անընդհատ թարմացվել են՝ պայմանավորելով վերջինիս գրավչությունը: Նախկինում ծրագրում դասավանդել են լավ մասնագետներ, ծրագիրն իր հեղինակության հաշվին կայանալու խնդիր չի ունեցել և, որ վերջին տարիների պատկերը իր համար անակնկալ է եղել: Մատնանշեց, որ նպատակը մեկն է՝ բարձրացնել ծրագրի գրավչությունը և ուսանողներին մատուցել բարձրակարգ կրթություն: Հավելեց նաև, որ ՄՏՀ մագիստրոսական կրթական ծրագիրը ներառված է 2024-25 ուստարվա ընդունելության ծրագրում, որոշ դասընթացներ պետք է վերանայվեն, սակայն ժամկետի խնդիր կա: Հաշվի առնելով քննարկումը առաջարկեց՝ հաստատել ՄՏՀ մագիստրոսական կրթական ծրագրի ներկայացված տարբերակը և աշխատանքային կարգով քննարկել ներկայացված առաջարկները:

Այլ առաջարկներ չեղան:

3.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 21.12.23թ. կայացած թիվ 5 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել առկա ուսուցմամբ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագրի (1,5 տարի, 90 ECTS) փոփոխված տարբերակը:

ՄՏՀ մագիստրոսական կրթական ծրագրի փոփոխված տարբերակի հաստատման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

4. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունների քննարկման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գրասենյակի ղեկավար - դեկանի տեղակալ, որակի ապահովման հանձնաժողովի նախագահ տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանը հանդես եկավ զեկուցմամբ: Տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանը նշեց, որ սույն թվականի հունվարի 30-ին կայացել է ՏԿՖ որակի ապահովման հանձնաժողովի նիստը, որտեղ հաստատվել է ֆակուլտետում գործող բակալավրի 3 ծրագրերի. «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ» և «Կառավարում» մշտադիտարկման հաշվետվությունները: Հավելեց, որ ԵՊՀ գիտխորհրդի 2023թ. մարտի 23-ի թիվ 9 նիստում հաստատվել է ԵՊՀ կրթական ծրագրերի մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման կարգը: Համաձայն սույն կարգի՝ մշտադիտարկումն իրականացվում է 9 հիմնական ուղղություններով՝ 1) կրթական

ծրագրի քանակական բնութագրերը, 2) ուսանողական հարցումների արդյունքները, 3) շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները, 4) ծրագրի մյուս շահառուների արձագանքը, 5) համագործակցային կապերն ու պրակտիկան, 6) կրթական ծրագրերի փոփոխությունները, 7) ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կատարողականը, 8) կրթական ծրագրի SWOT վերլուծությունը, 8) ծրագրի որակի բարձրացման գործողությունների պլանը: Նշված ուղղություններով կազմվել է 20 էջանոց փաստաթուղթ, կրթական ծրագրերի որակի բարելավման թիվ 1 խնդիրն է ունենալ որակյալ բակալավրի ծրագրեր:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, «Կառավարում» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանող Դ.Մանուչարյանը:

Հարցադրումներն առնչվում էին ֆակուլտետի բակալավրի 3 կրթական ծրագրերում առկա հիմնական խնդիրներին, մշտադիտարկման արդյունքների հիման վրա խրախուսման տարրերի կիրառմանը, ուսանողական հարցմանը ուսանողների անբավարար մասնակցությանը:

3. Տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանը պատասխանելով հարցադրումներին նշեց, որ հիմնական խնդիրներն առնչվում են պրակտիկային, ավարտական աշխատանքի թեմատիկային: Փաստաթղթում ստացված տեղեկատվությունը ձևավորվում է ուսանողական հարցումներից, որի համաձայն դասախոսական անձնակազմի վերաբերյալ ծայրահեղ գնահատականներ չեն եղել:

4. Ելույթ ունեցան, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը:

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հանդես եկավ ամփոփիչ ելույթով, նախ նշեց, որ գործող լրավճարների համակարգը խրախուսման գործառույթ ունի, մտահոգիչ է առավելագույնը 6-7 ուսանողի մասնակցությունը ուսանողական հարցմանը, դա օբյեկտիվ պատկեր չի տալիս, առաջիկա հարցման համար ԵՊՀ-ում նախատեսվում է երկշաբաթյա ժամկետ, պետք է աշխատանք տանել, որպեսզի ուսանողները ակտիվ մասնակցեն: Հավելեց, որ կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ մեծ ծավալի աշխատանք է կատարվել, որը պետք է շարունակական բնույթ կրի՝ արդյունք ապահովելու նպատակով: Բակալավրի կրթական ծրագրերը արմատապես վերանայվելու են, նախորդ փոփոխությունը կատարվել է բավական սեղմ ժամկետներում, երբեմն անտեսվել են տրամաբանական կապերը: Բովանդակային մասով լուրջ կորուստներ են գրանցվում, երբ փոփոխությունը պայմանավորում ենք անձերով և ոչ բովանդակությամբ: Ներկա պահին փորձում ենք նորմավորել, աշխատանքային խմբերն ակտիվ աշխատում են, միջազգային փորձն ուսումնասիրվել է, կանցնենք նաև տեղական փորձի ուսումնասիրությանը և աշխատաշուկայի հետ կապի վերլուծությանը: Ամփոփելով առաջարկեց՝

քվեարկությամբ հաստատել ՏԿՖ բակալավրի կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի 30.01.24թ. կայացած թիվ 1 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունները, ընդունել հաշվետվություններում արված առաջարկությունները և հանձնարարել ծրագրերի ղեկավարներին և դեկանի տեղակալ Վ.Ալեքսանյանին՝ դրանք պարտադիր հաշվի առնել բակալավրի ծրագրերի փաստաթղթերի ընթացիկ և հետագա տարիների փաթեթներում:

ՏԿՖ բակալավրի կրթական ծրագրերի մշտադիտարկման հաշվետվությունների հաստատման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

5. Ընթացիկ հարցեր

5.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորի/դոցենտի օգնական նշանակելու մասին հարցը:

5.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հայտնեց, որ ԵՊՀ ռեկտորի 2023թ. նոյեմբերի 8-ի հրամանի համաձայն՝ ԵՊՀ-ում գործում է «Պրոֆեսորադասախոսական կազմի օգնականի ներգրավելու կարգը»: Կարգի նպատակը պրոֆեսորին ուսումնական պրոցեսում օժանդակելն է, մասնավորապես՝ կոնկրետ դասընթացի վարման կազմակերպչական և տեխնիկական հարցերի կազմակերպման շրջանակում: Պրոֆեսորի օգնականի գործառույթները հստակ ամրագրված են սույն կարգի 12-րդ կետով:

2. «Կառավարման և գործարարության» ամբիոնի պրոֆեսորի/դոցենտի օգնական նշանակելու միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ գործող կարգով առաջնորդվելով իրազեկել են ֆակուլտետի ասպիրանտներին և մագիստրատուրայի ուսանողներին, հավաքագրել են ստացված հայտադիմումները: Պրոֆեսորի օգնական ունենալու ցանկություն են հայտնել ամբիոնի 3 աշխատակից՝ դոցենտ, տ.գ.թ. Ա.Հակոբջանյանը, դոցենտ, տ.գ.թ. Ն.Միրզոյանը, դոցենտ, տեխ.գ.թ. Հ.Զաքոյանը, իսկ պրոֆեսորի օգնական դառնալու համար հայտագրվել է 6 անձ: Գործող կարգի համաձայն անձին որպես պրոֆեսորի

օգնական ներգրավելու երաշխավորությունը քննարկվել է «Կառավարման և գործարարության» ամբիոնի նիստում՝ սահմանված ժամկետում:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել պրոֆեսորի/դոցենտի օգնական նշանակելու վերաբերյալ «Կառավարման և գործարարության ամբիոնի» ընդունած որոշումը:

5.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 24.01.24թ. կայացած թիվ 8 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի համար.

1) «Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ, «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տ.գ.թ. Աննա Հովիկի Հակոբջանյանի օգնական նշանակել՝ հեռակա ուսուցման նույն կրթական ծրագրի 2-րդ կուրսի մագիստրանտ Մարիամ Նորիկի Մինասյանին:

2) Ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ, տ.գ.թ. Նարինե Էռնեստի Միրզոյանի օգնական նշանակել՝ «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի հեռակա ուսուցման 1-ին կուրսի մագիստրանտ Մարիամ Արտեմի Գյուրջյանին:

3) «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տեխ.գ.թ. Հարություն Վարազդատի Զաքոյանի օգնական նշանակել հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ալիսա Ռաֆիկի Գրիգորյանին:

ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորի/դոցենտի օգնական նշանակելու որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

5.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի և գիտական ղեկավարների հաստատման մասին հարցը:

5.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հայտնեց, որ ԵՊՀ գիտխորհրդի 2023թ. դեկտեմբեր 22-ի թիվ 9 որոշմամբ սահմանվել է ԵՊՀ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման նոր կարգը: Սույն կարգի համաձայն՝ մագիստրոսական թեզերի թեմաները պետք է հաստատվեն ֆակուլտետի գիտխորհրդում:

2. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի

թեմաների և գիտական ղեկավարների հաստատման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնում գործում է 2 մագիստրոսական ծրագիր. «Շուկայագիտություն (մարքեթինգ)»՝ առկա (17 ուսանող) և հեռակա (8 ուսանող) ուսուցմամբ, «Գործարար վարչարարություն (կառավարում)»՝ առկա (19 ուսանող) և հեռակա (15 ուսանող) ուսուցմամբ: Մագիստրոսական թեզերի թեմաների առաջարկվող ձևակերպումները և համապատասխան ղեկավարների նշանակման հարցը, նախ, քննարկվել է աշխատանքային խմբում, հետո՝ ֆակուլտետի մեթոդխորհրդում, այնուհետև հաստատվել է ամբիոնի նիստում:

3. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման առկա ուսուցման «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի (16 ուսանող) մագիստրոսական թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ մագիստրոսական թեզերի թեմաների ձևակերպումները և համապատասխան ղեկավարների նշանակման հարցը քննարկվել է ամբիոնի նիստում և ֆակուլտետի մեթոդխորհրդում: Հավելեց, որ ծրագրի լավագույն ուսանողները ուսումնառության երկրորդ տարում կարող են ուսումը շարունակել Սան Խոսեի պետական համալսարանում (ԱՄՆ) և ստանալ կրկնակի դիպլոմ: Այս առումով, եթե Սան Խոսեի պետական համալսարանի հետ համաձայնեցման խնդիր ծագի, ապա կհամաձայնեցվի ԵՊՀ կարգին:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել ֆակուլտետի առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

5.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

1) Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 24.01.24թ. կայացած թիվ 8 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա և հեռակա ուսուցման «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (առկա ուսուցման գծով՝ 17, հեռակա ուսուցման գծով՝ 8) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով (ցանկը կցվում է):

2) Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 24.01.24թ. կայացած թիվ 8 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա և հեռակա ուսուցման «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (առկա ուսուցման գծով՝ 19, հեռակա ուսուցման գծով՝ 15)

թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով (ցանկը կցվում է):

3) Հիմք ընդունելով «Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման» ամբիոնի 25.01.24թ. կայացած թիվ 7 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի առկա ուսուցման «Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 16) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով (ցանկը կցվում է):

ՏԿՖ առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի թեմաների և գիտական ղեկավարների հաստատման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ